ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արագածոտնի մարզի Արթինլեռի օբսիդիանի հանքավայրի «Ապագա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման վերաբերյալ

06.06. 2025թ. **Արագածավան բնակավայր**

Հանրային լսմանը մասնակցում էին.

- Հանրային լսման պատասխանատու՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Սուսաննա Անտոնյանը,
- Արագածավան բնակավայրի վարչական ղեկավար Արթուր Նազարյանը,
- «ԷԼ ԷՆ ԴԻ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Արտակ Անտոնյանն ու Շահեն Խաչատրյանը,
- ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցիչներ Գոհար Մարտիրոսյանն ու Կարեն Մարգարյանը,
- Թալին համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Միրզախանյանը,
- Թալին համայնքապետարանի բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սոս Հարոյանը,
- Արագածավան բնակավայրի բնակիչներ և այլ մասնակիցներ:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (03.05.2024թ. ՀՕ-150-Ն, այսուհետ՝ Օրենք) համաձայն, ինչպես նաև ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի №2343-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանված կարգով, 2025թ. հունիսի 6-ին, ժամը 14:30-ին, Թալին համայնքի Արագածավան բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրը հյուրընկալեց Արթինլեռի օբսիդիանի հանքավայրի «Ապագա» տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսումը վարեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ Սուսաննա Անտոնյանը, ով հանդես եկավ բացման խոսքով՝ ներկայացնելով փորձաքննական գործընթացն ու կատարված աշխատանքները:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, շրջակա միջավայրի տարբեր բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունները, ինչպես նաև ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված ազդեցությունների մեղմման միջոցառումները, մասնավորապես՝ մթնոլորտային օդի, հողային ռեսուրսների և այլնի վերաբերյալ:

Հաշվետվությունն Օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներին և այլ գերատեսչություններին՝ կարծիքներ ստանալու նպատակով: Փորձաքննության իրականացման արդյունքում հաշվետվության վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք հաշվի են

առնվել լրամշակումների ընթացքում, և հաշվետվությունը ներկայացվել է նախաձեռնողին՝ լրամշակված տարբերակով:

Սուսաննա Անտոնյանը ներկայացրեց, որ տարածքը գտնվում է Արագածոտնի մարզում, բնապատմական համալիր Մեծ Արտենի լեռան (2047 մ) արևելյան լանջին՝ «Մեծ Արտենի» էքստրուզիվ կոն երկրաբանական հուշարձանի տարածքում: Արդյունահանման տարածքը լեռան գագաթից գտնվում է մոտ 1.5 կմ հեռավորության վրա և կարող է ունենալ բացասական ազդեցություն հուշարձանի վրա: Նշվեց նաև, որ հուշարձանը գրանցված է ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի №967-Ն որոշմամբ, որով այն սահմանվել է որպես բնության հուշարձան՝ իր ամբողջ երկրաբանական կառուցվածքով:

Շ.Խաչատրյանը ներկաներին ներկայացրեց, որ երկրաբանական հուշարձան համարվող այսպես կոչված «Մեծ Արտենի էքստրուզիվ կոնը» ոչ թե սարի լանջերին է այլ գագաթին, որը գտնվում է հայցվող տարածքից 1.5կմ հեռավորության վրա իսկ նախատեսվող գործունեությունը չի կարող ազդել այդ մարմնի վրա:

Շ.Խաչատրյանը նշեց նաև, որ նմանատիպ պարզաբանում է տրված նաև ԵՊՀ -ի կողմից: ՀՀ ԳԱԱ Երկրաբանական գիտությունների ինստիտուտը պատասխան գրությանը կից ներկայացրել է ՇՄ նախարարության համապատասխան ստորաբաժանման պարզաբանումը, որտեղ հստակ նշված է, որ հիշատակված հուշարձանը անձնագրավորված չէ և պահպանման գոտի առանձնացված չէ:

Սուսաննա Անտոնյանը նշեց, որ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բնության հուշարձանի տարածքում արգելվում է ցանկացած գործունեություն, որը կարող է սպառնալ դրա պահպանությանը:

Արտակ Անտոնյանն հավելեց, որ դիմել են լիազոր մարմնին, և պարզվել է, որ դեռևս հստակ չէ, թե երբ կհաստատվի տվյալ հուշարձանի անձնագիրը և կսահմանվեն դրա պահպանության գոտիները:

Ընկերության ներկայացուցիչները ներկաներին հավաստիացրին, որ եթե որոշվեն հուշարձանի սահմաններն ու հայցվող տեղամասը ներառվի դրա մեջ ապա իրենք կհրաժարվեն ծրագրից: Պատրաստակամություն հայտնեցին նաև իրենց մասնագիտական աջակցությունը տրամադրել այդ աշխատանքներին:

Սուսաննա Անտոնյանը հավելեց, որ Կառավարության որոշումը արդեն իսկ ապահովում է հուշարձանի պաշտպանությունը, և արդյունահանումը կարող է ունենալ անմիջական ազդեցություն դրա վրա:

Մասնակիցների կողմից քննարկվեցին հնարավոր լուծումները, որոնք թույլ կտան հուշարձանի անձնագրավորումը կատարել սեղմ ժամկետներում և հստակեցնել դրա կարգավիճակը:

Սուսաննա Անտոնյանը նշեց մեկ այլ խնդիր, որը կապված էր Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հետ: Նա պարզաբանեց, որ ներկայացված բուսաբանական եզրակացությունը լիարժեք չէ, քանի որ տեղազննումը իրականացվել է միայն մեկ անգամ՝ մայիս ամսին, մինչդեռ տարածքում հանդիպող որոշ բույսերի ծաղկման շրջանը հունիս-օգոստոս ամիսներն են:

Կարմիրգրքային բուսատեսակների վերաբերյալ փորձագետի կողմից բարձրացված հարցի առնչությամբ Շ.Խաչատրյանը պարզաբանեց, որ ՇՄԱԳ հաշվետվության կազմման ընթացքում մասնագիտական խումբը օգտվել է նախ՝ մասնագիտական գրականությունից, այդ թվում՝ մոտակայքում այլ ընկերությունների կողմից կազմված և դրական եզրակացություններ ստացած ՇՄԱԳ հաշվետվություններից, որից հետո իրականացվել են դաշտային այցելություններից: Հղում անելով վերջերս դրական եզրակացություն ստացած ՇՄԱԳ հաշվետվություններին Շ.Խաչատրյանը նշեց, որ կարմիրգրքային տեսակները գտնվում են հայցվող տեղամասից շատ հեռու, իսկ ինչ վերաբերում է բուսաբան մասնագետի տեղամաս մեկանգամյա այն էլ շատ բույսերի ոչ ծաղկման ժամանակահատվածում այցելությանը, Շ.Խչատրյանը նշեց, որ տեսակ որոշելու համար բացի ծաղկից այլ բնութագրիչներ էլ կան, ինչը հնարավորություն է տվել մասնագետին անել եզրահանգում այն մասին, որ հայցվող տեղամասի սահմաններում կարմիգրքային տեսակներ առկա չեն:

Անտոնյանը նշեց, որ տարածքում կկազմակերպվի ևս մեկ տեղազննում՝ իր և բուսաբանի մասնակցությամբ՝ Կարմիր գրքյան բուսատեսակների առկայությունը ճշտելու նպատակով: Նախագծող կողմը և վարչական շրջանի աշխատակիցները նույնպես հայտնեցին իրենց մասնակցության պատրաստակամությունը: Անտոնյանը հավելեց, որ տեղազննման օրվա վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

Թալին համայնքի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Միրզախանյանը նշեց, որ համայնքը կողմ է արդյունահանման աշխատանքների իրականացմանը, քանի որ ընկերության կողմից արդեն իսկ կատարվել է զգալի ներդրում, և ծրագիրը նախատեսում է ստեղծել աշխատատեղեր համայնքում, ինչը շատ կարևոր է:

Սուսաննա Անտոնյանը նշեց, որ ՇՄՆ նախարարության համար նույնպես կարևոր է համայնքների զարգացումը և ներդրումները, սակայն, միևնույն ժամանակ, բարձրացված հարցերը պահանջում են իրավական հստակեցում և պետք է առաջնորդվել օրենքներով՝ հնարավորինս քիչ վնաս պատճառելով բնությանը և ապահովելով պատմաերկրաբանական հուշարձանների պաշտպանությունը:

Վարչական ղեկավարը ևս ընդգծեց, որ իրենց համար կարևոր է հանքի շահագործումը, քանի որ այն կնպաստի բնակավայրի սոցիալ-տնտեսական զարգացմանը:

Սուսաննա Անտոնյանը եզրափակեց՝ նշելով, որ հարցերը ևս մեկ անգամ կքննարկվեն լիազոր մարմինների հետ՝ համապատասխան լուծում տալու նպատակով, որը պետք է լինի օրենքին համապատասխան:

Հանրային լսման ընթացքում այլ հարցեր չեն հնչել: Լսումը լուսանկարվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Սուսաննա Անտոնյան

Նախաձեռող՝ «ՀԱՅՐ ԵՎ ՈՐԴԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆՆԵՐ»
ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝